



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Կ՝ՈՂՋՈՒՆԵ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԿՈՂՄԵ ԹԻՒ 306 ԲԱՆԱԾԵԻՆ ՈՐՂԵԳՐՈՒՄԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Չորեքշաբթի, 14 Դեկտեմբերին, գոհունակությիւն արձանագրեց ամերիկեան խորհրդարանին կողմէ թիւ 306 բանաձեւին որդեգրման համար:

Թուրքիոյ մէջ կրօնքի ազատութիւն եւ եկեղեցական գրաւեալ կալուածները իրենց սկզբնական տէրերուն վերադարձը պահանջող բանաձեւը Երեքշաբթի, 13 Դեկտեմբերին քուէարկութեամբ որդեգրուեցաւ Ներկայացուցիչներու տան կողմէ: Զանի մը ամիս առաջ, օրինագիծը որդեգրուած էր արտաքին յարաբերութեանց յանձնախումբին կողմէ, 1ի դէմ 43 քուէով: Բանաձեւը Թուրքիոյ իշխանութիւններէն կը պահանջէ քրիստոնէայ փոքրամասնութեանց պատկանած եկեղեցիներ ու աղօթավայրեր, որոնց շարքին հայկական եկեղեցական կոթողներ ու դարաւոր ժառանգութիւններ վերադարձուիւն իրենց տէրերուն:

«Կ՝ողջունենք այս բանաձեւին որդեգրումը, որ կարելոր յառաջիադացք է ոչ միայն հայերուս, այլ նաեւ բոլոր անոնց համար, որոնք հետամուտ են կրօնական ազատութեանց, հաւասարութեան ու արդարութեան: Կը յուսանք, որ այս պահանջը իրականութիւն դառնայ եւ մեր եկեղեցական իրաւունքները վերադարձուիւն պահանջատէր սեփականատիրոջ՝ մեր ժողովուրդի գաւակներուն», յայտարարեց Առաջնորդ Սրբազանը, միաժամանակ բարձր գնահատելով այս բանաձեւին պատրաստութեան ու հետապնդման նուիրեալները:

### PRELATE SALUTES PASSAGE OF HOUSE RESOLUTION 306

On Tuesday, December 13, 2011, the ANCA reported that the U.S. House of Representatives adopted a landmark religious freedom measure, H. Res. 306, calling on Turkey to return Christian Church properties it stole through genocide, and to end its oppression of Christian minorities in present-day Turkey.

"We were overjoyed to learn of the passage of H. Res. 306. This is indeed a monumental victory not only for the Armenian people but for all those who value religious freedom, equality, and justice. We hopefully anticipate the

end of religious and ethnic discrimination and await the day when our sacred sites are returned to their rightful owners, the Armenian people" stated H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.